ՍԵՊՏԵՄԲԵՐ 20, 2022

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԵՏԱԶՈՏՈՂ՝ ԱՆԱՀԻՏ ՂԱՐԻԲՅԱՆ
«ՍՊԻՏԱԿԻ ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԽՈՒՄԲ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Հապավումներ 2
Ներածություն 3
Հետազոտության մեթոդաբանություն 3
Արդյունքների վերլուծություն և հիմնական բացահայտումներ 4
Իրավիճակի նկարագրություն 4
Ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանության մեխանիզմները 8
Ընտանեկան բռնության ենթարկված կանանց դատարան դիմելու հիմնական դժվարություններն ու խոչընդոտները 12
Հասարակական ընկալումներ և ճնշումներ 12
Ֆինանսական դժվարություններ 15
Դատարանների մատչելիությունը ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար 16
Հիմնական եզրակացություններ և առաջարկներ 25
Եզրակացություններ 25
Առաջարկներ 27

Գծապատկեր 1. **Ընտանեկան իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործերի ընդհանուր թիվը Լոռու մարզում , Հայաստանում** 5
Գծապատկեր 2. **Ընտանեկան իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործեր, Լոռու մարզ** 6
Գծապատկեր 3. **Ընտանեկան իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործեր, ՀՀ** 7
Գծապատկեր 4. Ընտանեկան բռնության ենթարկված կանանց առնչությունը դատարանների հետ 16
Գծապատկեր 5. Դատարան դիմելու հիմնական պատճառները 17
Գծապատկեր 6. Փաստաբանի առկայությունը դատարան դիմելիս 17
Գծապատկեր 7. Փաստաբանի ծառայությունների դիմաց վճարի առկայությունը 18
Գծապատկեր 8. Անվճար իրավաբանական օգնության՝ հանրային պաշտպանի առկայությունը 18
Գծապատկեր 9. Աջակցող որևէ կազմակերպությունից օգնության նպատակով դիմելու դեպքերը 19
Գծապատկեր 10. Ստացած աջակցության բնույթը 19
Գծապատկեր 11. Ստացած աջակցության ազդեցությունը խնդրի լուծման վրա 20
Գծապատկեր 12. Դատարանի գործունեությունից հարցվածների բավարարվածության աստիճանը 20
Գծապատկեր 13. Դատարանների հետ կապի հաստատման միջոցները 22
Գծապատկեր 14. Դատարանի սահմանած պետական տուրքերի ու վճարների մատչելիությունը 22
Գծապատկեր 15. Գումարի չափը, որը պատրաստ են վճարել հարցվողները որպես պետական տուրք 23
Գծապատկեր 16. Դատարանների մատչելիությունն առկա դատական ծախսերի պայմաններում 23

Աղյուսակ 1. Հարցվողների սոցիալ-ժողովրդագրական տվյալները 24

Հապավումներ

ԱԺ – Ազգային ժողով

ՀԿ – հասարակական կազմակերպություն

ՀՀ – Հայաստանի հանրապետություն

ՄՄՇ – Միասնական սոցիալական ծառայություն

ՔՕ – Քրեական օրենսգիրք

ՖԽՔ – Ֆոկուս խմբային քննարկում

ՔՀԿ – Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

Ներածություն

Թեև ընտանեկան բռնության վերաբերյալ ընդունված օրենսդրական կարգավորումները մասամբ գործում են, մինչ օրս սոցիալ-մշակութային, ինչպես նաև մի շարք իրավական կարգավորումներ հնարավորություններ չեն ստեղծում կանանց համար՝ դիմելու դատարաններ և պաշտպանելու իրենց խախտված իրավունքները: Դատարանների մատչելիությունն ու հասանելիությունը մինչ օրս խնդրահարույց է ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար: Մասնավորապես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանվում է ՀՀ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատման հիմքերը: Հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով ամրագրված է, որ «Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ հայցերով»:
Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կարգավորումների տրամաբանությամբ՝ պետական տուրքի վճարումից ազատված են նաև ընտանեկան բռնության ենթարկված անձ հայցվորները՝ ալիմենտի գանձման, ալիմենտի չափի ավելացման, ալիմենտի վճարման վերաբերյալ համաձայնությամբ ալիմենտ վճարելու պարտավորություն ունեցող անձի մեղքով պարտք առաջանալիս՝ մեղավոր անձին պատասխանատվության ենթարկելու, ալիմենտը ժամանակին չվճարելու համար տուգանք բռնագանձելու կամ ալիմենտային պարտավորությունների ուշացմամբ պատճառված վնասների հատուցման վերաբերյալ հայցերով: Այդուհանդերձ, ընտանեկան բռնության ենթարկված անձ հայցվորները գործող կարգավորումների համապատասխան ազատված չեն պետական տուրքի վճարումից ամուսնալուծության, ինչպես նաև երեխայի բնակության վայրի որոշման վերաբերյալ հայցերով: Ավելին, օրենսդրական վերջին փոփոխությունների արդյունքում ընտանեկան բռնության ենթարկված անձ հայցվորները պարտավորվում են նշված հայցերի ներկայացման համար վճարել 20.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք:
Շատերի համար այս գումարի վճարումն անհասանելի է, ինչի պատճառով կանայք ոչ միայն չեն դիմում դատարաններ, այլև ստիպված են իրենց ընտանեկան վեճերն ու խնդիրները լուծել այլոց աջակցությամբ և/կամ միջնորդությամբ: Ինչպես նշում են հետազոտության մասնակիցները՝ խնդիրը պայմանավորված է նաև մշակութային ընկալումներով: Լոռու մարզում ընտանեկան բռնության ենթարկված կանայք ընտանիքում տեղ գտած խնդիրների մասին աշխատում են լռել, իսկ լուծման այլընտրանքը համարվում է ամուսնալուծությունը, նույնիսկ, եթե տևականորեն ենթարկվել են բռնության զուգընկերոջ կողմից:

Այս առումով խնդիրը ոչ միայն դատարանների հասանելիության, այլև հասարակական կարծիքի և ընկալումների դաշտում է: Մի կողմից՝ հասարակական ճնշումները, մյուս կողմից՝ ֆինանսական դժվարությունները, թույլ չեն տալիս ընտանեկան բռնության ենթարկված կանանց դիմելու իրավապահ մարմինների՝ բռնության մասին ահազանգելու և իրենց ոտնահարված իրավունքներն օրինական ճանապարհով լուծելու համար:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության նպատակ

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրության առանցքային նպատակներից է հասկանալ, թե որքանով են դատարանները հասանելի և մատչելի՝ ընտանեկան բռնության ենթարկված կանանց:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար առանձնացվել են հետևյալ հետազոտական խնդիրները.

- բացահայտել ընտանեկան բռնության ենթարկված անձանց՝ դատարաններ դիմելու դժվարություններն ու խոչընդոտները
- իրականացնել կանանց կողմից ներկայացված դատական հայցերի քանակական և որակական վերլուծություն
- պարզել դատարանների մատչելիությունը (գտնվելու վայրը, դատարան հասնելու ծախսերը, պետական տուրքի չափը, անհրաժեշտության դեպքում փաստաբան վարձելու ծախսերը և այլն) ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար

Մեթոդներ

Գնահատման մեթոդաբանությունը ներառում է խառը մեթոդներ, այդ թվում՝ տվյալների հավաքման քանակական ու որակական մեթոդներ և վերլուծական մոտեցումներ՝ միջամտության ազդեցության ու մշակութային/աշխարհագրական և այլ առանձնահատկություններ հաշվի առնելու համար: Գնահատման խառը մեթոդները թույլ են տալիս ուսումնասիրությունն ավելի մասնակցային ու ներառական դարձնել:

Փաստաթղթերի վերլուծություն: Փաստաթղթերի վերլուծության համար դիտարկվել են մի շարք իրավական կարգավորումներ, հրապարակումներ, պաշտոնական վիճակագրություն, այդ թվում՝ թեմային առնչվող այլ նյութեր:

Ֆոկուս խմբային քննարկումներ: Ֆոկուս խմբային քննարկումներ իրականացվել են ՀԿ ներկայացուցիչների, սոցիալական աշխատողների և շահագրգիռ այլ կողմերի շրջանում:

Խորը հարցազրույցներ: Խորացված հարցազրույցներ են անցկացվել Լոռու մարզում ընտանեկան բռնության ենթարկված կանանց, ոլորտի փորձագետների, քաղաքականություն մշակողների, դատավորների ու փաստաբանների շրջանում՝ համադրելու այլ մեթոդներից ստացված տվյալները:

Ընտրանքի ձևավորման հիմքերը

Որակական մեթոդով իրականացված հարցազրույցների համար կիրառվել է նպատակաուղղված/նպատակային ընտրանք՝ հաշվի առնելով ծրագրի շահառուների և շահագրգիռ կառույցների ներկայացվածությունը Լոռու մարզում ու համայնքներում: Ընտրանքի այս ռազմավարությունը սահմանում է ընտրանքի որոշակի շրջանակ՝ ըստ առանձնացված հիմքերի (տարածք, բռնության դեպքերի հաճախականություն և ներկայացված բնակչության քանակ)՝ ներկայացնելով դրա հիմնավորումը:

Լոռու մարզի շահագրգիռ կառույցների և ՀԿ ներկայացուցիչների շրջանում ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցներն ընտրվել են՝ ըստ ոլորտում ունեցած փորձառության և խնդրի առնչությամբ դրսևորած հետաքրքրության:

Ուսումնասիրության մասնակիցների ցանկ

ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ	ՄԵԹՈԴ	ԸՆՏՐԱՆՔԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ
ՀԿ և/կամ պետական կառույցների ներկայացուցիչներ, սոցիալական աշխատողներ	Ֆոկուս խմբային քննարկում	2 ՖԽՔ
ՇԱՀԱԳՐԳԻՌ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, փորձագետներ, ոլորտի ներկայացուցիչներ	Առանցքային տեղեկատուների հարցազրույց	- 2 փորձագետ - 3 դատավոր և/կամ դատավորի օգնական - 2 փաստաբան
Ընտանեկան բռնության ենթարկված անձինք	Խորը հարցազրույց Առցանց հարցում	- Առցանց հարցում 24 կանանց շրջանում - 3 կենսագրական հարցազրույցներ բռնության ենթարկված կանանց հետ
	ԸՆԴԱՄԵՆԸ	- 2 ՖԽՔ - 10 հարցազրույց - 24 ԱՌՑԱՆՑ ՀԱՐՑՈՒՄ

Արդյունքների վերլուծություն և հիմնական բացահայտումներ

Իրավիճակի նկարագրություն

Լոռու մարզի առաջին ատյանի դատարաններում անցկացված հարցումների ժամանակ գրեթե բոլոր դատարաններում տարածված էր այն կարծիքը, որ դատարանում ընտանեկան բռնության դեպքերը խիստ հազվադեպ են հանդիպում՝ տարին մեկ կամ երկու գործ, երբեմն էլ առհասարակ նման դեպքեր տարվա

կտրվածքով չեն ունենում: Նույն կարծիքին էին նաև Լոռու մարզում գործունեություն ծավալող փաստաբանները: Այսպես, Լոռու մարզի տարբեր քաղաքներում ձնակույտի մեթոդով հարցված 10 փաստաբաններից միայն 3-ն էին նման փորձառություն ունեցել: Իրենց ողջ մասնագիտական գործունեության ընթացքում եղել են 1-2 նման դեպք:

> *«Հիմնականում կանայք դիմում են իրենց եղբորը, հարազատներին կամ իրենց համար ազդեցիկ մարդու: Փորձում են առաջին հերթին իրենց միջոցով լուծել խնդիրը, բայց հետո, եթե ծայրահեղ դեպքեր են լինում, դիմում են դատարան կամ ոստիկանություն»:* **Դատավոր**

Հարցվածների համոզմամբ՝ հիմնական **պատճառը գործերի քննության երկարատև ընթացքն է և դատարանների կողմից վճիռների կայացման անարդյունավետությունը:** Այսինքն՝ վճիռը կայացվում է այնքան ուշ, որ խնդիրը ոչ միայն չի հանգուցալուծվում դատական ակտի կայացմամբ, այլև փաստացի այդ խնդրի շուրջ տարաձայնություններն ավարտված են լինում, երբեմն էլ զույգերն այդ ընթացքում հաշտվում են կամ բռնարարը հաշվեհարդար է տեսնում կնոջ հանդեպ՝ գործի քննության ընթացքում:

Մեր կողմից ուղարկված պաշտոնական գրությանը առ այն, որ դատարանը ներկայացնի վիճակագրական տվյալներ, թե տարվա կտրվածքով քանի հայց են ունենում ընտանեկան բռնության գործերով, ստացվել է թերի պատասխան՝ պատճառաբանությամբ, որ այդ դեպքերով պաշտոնական վիճակագրություն չի վարվում: Միաժամանակ ԲԴԽ դատական դեպարտամենտից նշել են, որ տարեկան վիճակագրությունը տեղ է գտնում court.am կայքում:

Իսկապես, կայքում տեղադրվում են եռամսյակային հաշվետվություններ՝ ըստ տարիների և մարզերի, սակայն դասիչներում բացակայում են բռնության մասին առանձին չափանիշներ:

Այդուհանդերձ, կան տվյալներ, որոնք վերաբերում են «Ընտանեկան իրավահարաբերությունների վերաբերյալ» դատական գործերին: Այսպես, մենք քննության ենք ենթարկել 2017-2022 թթ. ընկած ժամանակահատվածում նշված դեպքերի վիճակագրությունը՝ ըստ այդ տարիների ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններում քաղաքացիական գործերի քննության ընթացքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների:

*Գծապատկեր 1. **Ընտանեկան իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործերի ընդհանուր թիվը Լոռու մարզում և Հայաստանում***



Ինչպես երևում է Գծապատկեր 1-ում՝ սկսած 2017 թվականից՝ ընտանեկան իրավահարաբերություններին առնչվող գործերն ունեն աճի միտում: 2021թ.-ին՝ 2020 թ.-ի հետ համեմատ նկատվել է չնչին նվազում, որի ընդհանուր դինամիկան, սակայն, չի փոխվում: Հաշվի առնելով հանգամանքը, որ վերջին երկու տարիներին պետական տուրքի վճարը 4.000 դրամից դարձել է 20.000 դրամ, այդ աճի միտումն ավելի մտահոգիչ է: Ինչպես փաստում են Լոռու մարզի առաջին ատյանի դատարանների ներկայացուցիչները՝ շատ հազվադեպ են դեպքեր, երբ պետական տուրքի վճարից ազատվում են կամ վճարումը հետաձգվում է՝ առանց ներկայացնելու սոցիալական անապահովության մասին ապացույցներ, օրինակ՝ նպաստառու

ընտանիքի ներկայացուցիչներն ազատված են այդ վճարից և կարող են օգտվել հանրային պաշտպանի ծառայություններից:

*Գծապատկեր 2. **Ընտանեկան իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործեր, Լոռու մարզ***



Գծապատկեր 2-ից երևում է, որ Լոռու մարզի առաջին ատյանի դատարաններում քաղաքացիական գործերով ընտանեկան իրավահարաբերություններին առնչվող և ամենահաճախ հանդիպող դեպքերը համապատասխանաբար ամուսնալուծության, ալիմենտի պահանջի, երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու, երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ գործերն են, իսկ ամենահազվադեպ հանդիպողը՝ ծնողական իրավունքները վերականգնելու, ամուսնական պայմանագրի փոփոխման կամ լուծման, երեխայի որդեգրումը վերացնելու և երեխայի որդեգրման վերաբերյալ գործերն են: Այս վիճակագրությունը, թեև, աղերս չունի անմիջապես ընտանեկան բռնության ենթարկված անձանց վերաբերյալ գործերի հետ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ բռնությունը գաղտնի և ծածուկ է մնում շատ ընտանիքներում և ավարտվում պարզապես ամուսնալուծությամբ՝ առկա վիճակագրությունը ևս մտահոգիչ է: Ինչպես երևում է գծապատկերում ամուսնալուծության դեպքերի

քանակն ունի աճի միտում 2017 թվականից ի վեր: Վերջին երկու տարիներին այդ միտումը էական փոփոխության չի ենթարկվել և շարունակում է աճել, ինչը նշանակում է, որ պետական տուրքի վճարի չափը հաճախ կարող է զույգերին դրդել ամուսնալուծության դիմել ոչ թե դատարանների, այլ անմիջապես ՔԿԱԳ գործակալությունում: Գծապատկերում երևում է, որ նվազման միտում ունեն ալիմենտի պահանջի, երեխայի բնակության վայրը որոշելու և երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու վերաբերյալ գործերը:

*Գծապատկեր 3. **Ընտանեկան իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործեր, ՀՀ***



Գծապատկեր 3-ից երևում է, որ ՀՀ ողջ տարածքում ընտանեկան իրավահարաբերություններին վերաբերող գործերի բնույթը գրեթե նույն է: Տարբերությունները նկատելի են տարեկան կտրվածքով

դրանց միտումները քննելիս: Այդուհանդերձ, ՀՀ ողջ տարածքում ամուսնալուծության, ալիմենտի պահանջի, ալիմենտի չափը փոփոխելու և ամուսինների ընդհանուր գույքը բաժանելու վերաբերյալ գործերը նվազել են նախորդ տարում, սակայն էականորեն աճել 2017թ.-ից ի վեր:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ պետական տուրքի վճարի փոփոխությունն ավելի մեծ թվով անձանց շրջանակ է ենթադրում՝ հիմք ընդունելով վերջին տարիների վիճակագրական տվյալները, ինչն իր հերթին մեծացնելու է դրա բացասական ազդեցության շրջանակը հատկապես այն ընտանիքների ու կանանց համար, ովքեր ենթարկվել են բռնության և որոշում կայացրել ամուսնալուծվել՝ դատարանի միջոցով:

Ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանության մեխանիզմները

Ուսումնասիրության մասնակիցների կարծիքով՝ ընտանեկան բռնության ենթարկված կանայք իրենց իրավունքները պաշտպանելու հարցում մեծ հնարավորություններ չունեն: Գործող ինստիտուտներն ու մեխանիզմներն այնքան էլ կենսունակ չեն՝ հաշվի առնելով առկա խոչընդոտների և սահմանափակումների ազդեցությունը խնդրի վրա: Այսպես, պաշտպանության մեխանիզմների արդյունավետության մասին խոսելիս, գրեթե, բոլորը համակարծիք էին, որ դրանց ուղղությամբ պետք է տարվեն համալիր աշխատանքներ, որպեսզի կանայք ստանան բազմակողմանի աջակցություն, որը կօգնի նրանց խուսափել բռնությունից կամ պաշտպանվել բռնարարի հնարավոր հարձակումներից: Միաժամանակ կանանց ակտիվացմանն ուղղված քայլեր պետք է ձեռնարկվեն, որպեսզի վերջիններս, ընտանիքում հանդիպելով բռնության, կարողանան բարձրաձայնել դրա մասին՝ ներգրավելով շահագրգիռ կողմերին:

> *«Առաջին հերթին պետք է տեր լինեն իրենց իրավունքերին, իրազեկված լինեն՝ ում դիմեն, ինչպես դիմեն, ում ահազանգեն, որ ՀԿ-ները կամ աջակցման կենտրոնները կարողանան օգնել: Պետք է իմանան, որ կարող են դիմել ոստիկանություն: Երկրորդը՝ ունենան վստահելի մարդկանց և տարածք, որտեղ կարող են խոսել իրենց խնդիրներից՝ ընկերներ, բարեկամներ, աշխատակիցներ: Միայն այս պարագայում խնդրի մեջ հայտնվելիս կանայք իրենց մենակ ու անպաշտպան չեն զգա»:*
> **Փորձագետ**

Կանանց իրավագիտակցության բարձրացումը հարցվածներից շատերի պնդմամբ ամենաառաջնային օղակներից է՝ խնդրի լուծման հարցում: **Այսօր, հատկապես մարզերում ընտանեկան բռնության ենթարկված կանայք նույնիսկ չեն գիտակցում, որ իրենք բռնության զոհ են և պետք է պաշտպանեն իրենց իրավունքները:** Իրավագիտակցության բարձրացումն, ըստ հարցվածների, պահանջում է շահագրգիռ տարբեր կողմերի ներգրավվում և ենթադրում բազմաշերտ ու բարդ գործընթաց: Կանանց ինքնագիտակցության ու իրավագիտակցության բարձրացման աշխատանքներում այժմ ամենաակտիվ դերակատությունն ունեն ՔՀԿ ներկայացուցիչները: Վերջիններիս ջանքերով Հայաստանում ստեղծվում են ինքնօգնության տարբեր խմբեր, համագործակցային ցանցեր, աջակցության ծրագրեր և այլն, որոնց գործուն աջակցությամբ կանայք կարողանում են սեփական խնդիրները ոչ միայն գիտակցել, այլև չկաշկանդվել այդ խնդիրների մասին բարձրաձայնելուց: Այդուհանդերձ, նման **ծրագրերում մարզերում կանանց ներգրավվելը ևս շատ բարդ և աշխատատար գործընթաց է, քանի որ այդ կանանց ամուսինները հաճախ նրանց թույլ չեն տալիս մասնակցելու նման միջոցառումների, դասընթացների կամ ծրագրերի**, որի համար կազմակերպիչները հավելյալ ռեսուրսներ ու ջանքեր են ներդնում:

Հիմնախնդրի լուծման հարցում կարևոր դերակատարություն ունեն նաև **համայնքային և միասնական սոցիալական ծառայությունների (այսուհետ ՄՍԾ) սոցիալական աշխատողները**, ովքեր առավել քաջատեղյակ են համայնքներում ընտանեկան բռնության դեպքերի, ընտանիքներում բռնության ենթարկված կանանց կարիքների ու դժվարությունների մասին: Մեր ուսումնասիրության շրջանակներում սոցիալական աշխատողները ևս հանդիսացել են տեղեկատվության աղբյուր, քանի որ հենց նրանք են ընտանեկան բռնության դեպքերը վարում և, համապատասխանաբար, ուղղորդում կանանց՝ այս կամ այն աջակցության կենտրոններ, ոստիկանություն, դատարան և այլն:

Միաժամանակ, հարցված սոցիալական աշխատողների մեծամասնությունը համոզված են, որ ընտանեկան բռնության ենթարկված կանանց հետ աշխատելու համար հենց իրենք հաճախ կարիք ունեն վերապատրաստման, որպեսզի ձեռնարկվող միջոցառումներն ավելի թիրախային ու նպատակային

լինեն։ Սոցիալական աշխատողների առաքելությունը կարևոր է նաև այն իմաստով, որ նրանք մի կողմից կապող օղակ են տարբեր շահագրգիռ կողմերի ջանքերը համախմբելու համար, մյուս կողմից սերտ կապի մեջ են այն ընտանիքների հետ, որտեղ կանայք հանդիպել են բռնության և աջակցության կարիք ունեն։ Ըստ սոցիալական աշխատողների՝ քանի որ ընտանիքներում դրսևորված բռնության դեպքերի վերաբերյալ ընդունված չէ բարձրաձայնել, հաճախ նման դեպքերը բացահայտվում են համայնքի այլ բնակիչների միջոցով, ովքեր ահազանգում են բռնության մասին, կամ տնայցեր կատարելիս իրենք են դիտարկում։

Համայնքային և ՄՄԾ սոցիալական աշխատողները նաև համագործակցում են տեղի և միջազգային կառույցների, ՔՀԿ ներկայացուցիչների հետ և հնարավորության դեպքում կարողանում կանանց մատուցել անհրաժեշտ ծառայությունները։ Սակայն, այստեղ ևս բազմաթիվ են դժվարություններն այն առումով, որ սոցիալական աշխատողները շատ ծանրաբեռնված են աշխատում և ի վիճակի չեն արձագանքել բոլոր գրանցված դեպքերին՝ ռեսուրսների սղության և ժամանակի բացակայության պատճառով։

> *«Համայնքի խոշորացման պատճառով չկա հանրային տրանսպորտ, որ կարողանանք հասնել բնակավայր։ Եթե խնդիրը լուրջ է, իմ միջոցներով եմ իրականացնում։ Ռեսուրս չկա և ես չեմ կարող միշտ իմ ռեսուրսներն օգտագործել։ Դեպքեր վարելիս՝ երբեմն համայնքապետի հետ եմ գնում տնայցերի։ Բացի այդ, մարզում Կանանց աջակցության կենտրոն չկա, տեղ չկա բռնության ենթարկված կանանց տեղափոխելու համար։*
> *Բռնության դեպքերի մասին, սովորաբար, վարչական ղեկավարները կամ բնակիչներն են տեղեկացնում տնայցերի ժամանակ, այդպիսի ընտանիքների մասին գյուղի բնակիչները հիմնականում տեղյակ են։ Բռնության ենթարկվող կանայք չեն էլ դիմում՝ հարևաններն ու բարեկամներն են դիմում»։* **Սոցիալական աշխատող**

ՔՀԿ ներկայացուցիչների ջանքերն այս խնդրի ուղղությամբ, թեև, արդյունավետ են, սակայն շատ ծրագրեր, ֆինանսավորվելով այս կամ այն ֆոնդերի կողմից, կարող են կարճաժամկետ ազդեցություն ունենալ՝ հաշվի առնելով վերջիններիս ֆինանսական անկայունությունը և աջակցության տրամադրման ոչ տևական բնույթը։ Մյուս կողմից՝ ՔՀԿ ներկայացուցիչները դժվարություններ են ունենում մեծ թվով շահառուների ներգրավման հարցում՝ կրկին ռեսուրսների սղության պատճառով։ Այս է պատճառը, որ հարցված ՔՀԿ ներկայացուցիչների պնդմամբ՝ պետությունը պետք է համակարգող ու միավորող գործառույթ կատարի՝ աջակցության ծրագրերի շարունակականությունն ու ազդեցությունն ապահովելու նպատակով։

> *«Մենք փորձում ենք իրազեկել կանանց իրենց իրավունքների մասին։ Ընտանեկան բռնության ենթակված կանայք, օրինակ, ընկալում են բռնության միայն ֆիզիկական և սեռական դրսևորումները, բայց մենք տեղեկացնում ենք, որ եթե չեն թույլատրում կրթություն ստանալ կամ թոշակը տնօրինել, դա ևս բռնություն է։ Կան բռնության տարբեր տեսակներ։ Մենք հիմնականում ուղղորդում ենք մարզում գործող ընտանեկան բռնության աջակցման կենտրոն և համագործակցում իրենց հետ»։* **ՔՀԿ ներկայացուցիչ, փորձագետ**

Հարկ է նշել, որ այս ոլորտում բռնության ենթարկված կանանց վերաբերյալ բոլոր տվյալներն ու տեղեկությունները գաղտնի են պահվում և կարող են փոխանցվել երրորդ անձանց՝ միայն կանանց համաձայնությամբ։

> *«Մենք ապահովում ենք գաղտնիությունը և ստեղծում ապահով միջավայր։ Եթե ուզում են հանրայնացնել դեպքը, միայն այդ դեպքում ենք հանրայնացնում»։* **ՔՀԿ ներկայացուցիչ, փորձագետ**

Ոլորտում ծանրակշիռ դերակատարություն ունի **Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան,** ում գործուն աջակցությամբ իրականացվում է բռնության ենթարկված կանանց շահերի պաշտպանությունը։

Կոալիցիայի կազմում գործում են մի շարք մասնագիտական խմբեր, որոնք խորհրդատվություն են մատուցում կանանց, ապահովում անվճար ֆինանսական, իրավաբանական, հոգեբանական աջակցությամբ, ինչպես նաև կացարանով՝ ընտանիքում բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաներին պաշտպանելու համար:

Ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար **ապաստարաններ**ում տեղավորելու և կացարանով ապահովելու գործում ևս կոալիցիայի ջանքերով հնարավոր է լինում օգտագործել ձևավորված կապերը և կանանց առանձնացնել բռնարարից, սակայն մարզերում դրանք շատ սակավաթիվ են և ստիպված կանայք տեղափոխվում են այլ քաղաքներ: Հնարավոր է նաև երկար ընթացակարգերի պատճառով կանայք ստիպված լինեն սպասել իրենց հերթին՝ շարունակելով ապրել բռնարարի հետ միևնույն հարկի տակ և համակերպվելով «ծեծի» հետ, ինչպես նշում են ոլորտի մասնագետները: **Այս առումով ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանությունը, որ հաճախ պահանջում է հրատապ միջոցառումներ, չի իրականացվում պետական ընթացակարգերի դանդաղ ու ոչ արդյունավետ լինելու պատճառով:**

Ընտանեկան բռնության վերացման հարցում զգալի դերակատարություն ունեն նաև **ԶԼՄ ներկայացուցիչները**, ովքեր հանրության իրազեկման, խնդիրներ անաչառ ներկայացնելու և բարձրաձայնելու միջոցով ազդում են բռնարարի վարքի վրա՝ պաշտպանելով կանանց խախտված իրավունքները: Հաճախ այս կամ այն խնդիրը լուծվում է հանրային մեծ հնչեղության միջոցով: Բնականաբար, նման դեպքերում բոլորի համախմբված ջանքերով հնարավոր է լինում գրանցել դրական արդյունք:

> *«… կանայք հասկանալով, որ իրենց խնդիրը շատ բարդ է և չի լուծվում, գիտակցում են, որ պետք է իրենց խնդիրը բարձրաձայնվի, հանրային հնչեղություն ստանա՝ հոդվածի տեսքով, հաղորդման ժամանակ և այլն: Փորձը ցույց է տալիս, որ եթե խնդիրը չի հանրայնացվում, լուծում չի ստանում: Նման դեպքերում շահագրգիռ կողմերն ուղղորդում են որևէ լրատվամիջոցի, քանի որ կանայք դեռևս լսելի չեն, տղամարդիկ ավելի լսելի են բոլոր բնագավառներում»:* **Փորձագետ**

Փորձագետների կարծիքով **օրենսդրական դաշտի** բարելավումը ներկայում ոլորտի կանոնակարգման ամենակարևոր քայլերից է: Գործող իրավակարգավորումներն ու օրենսդրությունը կենսունակ չեն ու չեն պաշտպանում ընտանեկան բռնության ենթարկված կանանց:

> *«Օրենսդրություն ունենք, բայց շատ թույլ է: Վերջերս քրեական օրենսգրքում փոփոխություններ են եղել, բայց դա էլ բավարար չէ: Օրենքը հիմնականում հաշտեցման է տանում, որը ընտանեկան բռնության դեպքում ճիշտ չէ: Օրենքը պետք է ավելի ազդեցիկ լինի, օրինակ՝ կպնի բռնարարի գրպանին կամ այլ եղանակով: Անձի տուժելուց՝ օրինակ, մահից հետո, է բռնարարը պատժվում, իսկ այլ դեպքերում անպատժելի է»:* **Փորձագետ**

Միաժամանակ, կարիք կա բարելավվելու օրենքի միջոցով սահմանված պաշտպանության մեխանիզմները: Դիցուք, պաշտպանական միջոց կիրառելու դեպքում կինն է հետևում, որ բռնարարը չխախտի սահմանված կարգը: Բացի այդ, բռնությունը մինչև ֆիզիկական ծանր հետևանքներ չի ունենում, բռնարարը չի պատժվում:

> *«Ոստիկանության միջոցով նաև դիմում են պաշտպանական միջոցի կիրառմանը, բայց դա այդքան էլ արդյունավետ չի, որովհետև հայտնի չի՝ ով է հսկում, թե ամուսինը քանի մետր մոտեցավ կնոջը կամ ընդհանրապես էդ հսկողությունը ոնց է սահմանվում և այլն»:* **Դատավոր**

Ուսումնասիրության մասնակիցների գերակշիռ մեծամասնությունն այն համոզմանն է, որ փաստաբանների ծառայությունները ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար դեռևս անհասանելի են: Ըստ հարցվածների՝ մի կողմից քիչ են այն փաստաբանները, ովքեր մասնագիտացած են այդ հարցերում, մյուս կողմից՝ կանայք չունեն ֆինանսական բավարար միջոցներ՝ վճարելու փաստաբանական ծառայությունների դիմաց: Ահավասիկ՝ Լոռու մարզում կան նաև համայնքներ, որտեղ

առհասարակ չկան փաստաբաններ և կանայք հնարավորություն չունեն նույնիսկ գումարի դիմաց ստանալու անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն։

Սրա հետ մեկտեղ, տարբեր փաստաբանների և փորձագետների պնդմամբ, **հանրային պաշտպանի գրասենյակն** արդյունավետ չի գործում, քանի որ ընտանեկան բռնության ենթարկված կանայք, օգտվելով նրանց անվճար ծառայություններից, հաճախ դժգոհ են մնում և ստիպված լինում գումար հայթայթել և դիմել այլ փաստաբանների օգնությանը։

Թեև հասարակության մեջ ընտանեկան վեճերի լուծման համար ընդունված չի դիմել **դատարաններ** և միշտ չէ, որ արդյունքը կարող է գոհացնել կողմերին, շատերի համար այն խնդրի հանգուցալուծման ամենակարևոր օղակներից է։ Հարցված կանայք ու փարձագետներն ընդհանուր առմամբ նշում են, որ դատարանի աշխատանքն իրենց գոհացնում է, սակայն պետական տուրքի վճարը և դատական այլ ծախսեր իրենց ստիպում են դատարան դիմել ծայրահեղ դեպքերում, երբ արդեն այլ ուղիներ չկան՝ բռնարար ամուսնու գործողությունները կանխելու և պաշտպանվելու համար։

> *«Իրականում մեզ մոտ դատարան դիմելու կամ ոստիկանություն դիմելու պրակտիկա չկա։ Շատերն առաջինը դիմում են իրենց ընտանիքին, հարազատներին, մեծ եղբորը կամ այլ հեղինակություն ունեցող մարդու, ով կլուծի էդ հարցը։ Պատճառն այն չի, որ վստահություն չունեն դատարանի հանդեպ, այլ այն, որ ընդունված չի դատարանով կամ ոստիկանության միջոցով նման հարցեր լուծելը»։* **Դատավոր**

Հարցվածները համակարծիք են նաև այն հարցում, որ **ոստիկանությունն** ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանության հարցում արդյունավետ չի գործում։ Հասարակության մեջ ոստիկանություն դիմելու մշակույթը ևս չի խրախուսվում, սակայն ծայրահեղ դեպքերում, կանայք, զգալով, որ իրենց կյանքին վտանգ է սպառնում և չունենալով աջակցության այլ միջոցներ, դիմում են նրանց։

> *«Մինչև դատարան հասնելը, ոստիկանության են դիմում, եթե կյանքին վտանգ է սպառնում, բայց էլի դա շատ տարածված չի մեր մոտ, որովհետև չեն ուզում պիտակավորվել»։* **Փորձագետ**

Փորձագետների պնդմամբ՝ ոստիկանությունում կանայք, ահազանգելով ամուսնու կողմից բռնության դեպքերի մասին, ծաղրի են արժանանում կամ էլ ոստիկանության ներկայացուցիչները, հանդիպելով ամուսնու հետ, կարճում են գործը, որպեսզի այն ընթացք չստանա։ Որպես կանոն՝ տղամարդիկ հերքում ու ընդդիմանում են բռնության մասին իրենց հասցեին հնչող մեղադրանքներին, մինչդեռ կանայք ավելի հակված են փոխըմբռնման ու հաշտեցման։

Ըստ հարցվածների՝ երբեմն էլ բռնությունը կարող է դրսևորվել տղամարդկանց հանդեպ և որպես արդյունք՝ պայմանավորված լինել կնոջ գործողություններով։

> *«Երբեմն էլ տղամարդիկ պաշտպանության կարիք ունեն, բայց դրա մասին ոչ ոք չի ասում։ Տղամարդկանց նկատմամբ հոգեբանական ճնշումների արդյունքում պատահում են դեպքեր, երբ տղամարդիկ ճարահատյալ հարվածում են կամ սկսում ծեծել իրենց կնոջը, ինչն, իհարկե, անընդունելի է, բայց պետք է հասկանանք, որ այդ վեճերի հիմքում խնդիրներ կան ու հաճախ դրանք սոցիալական բնույթի են»։*

Այսպիսով, ուսումնասիրության մասնակիցների մեծամասնությունն այն կարծիքին է, որ չնայած ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանության համար կան տարբեր մեխանիզմներ, բայց և այնպես դրանք այդքան էլ արդյունավետ չեն գործում մարզերում, մասնավորապես՝ Լոռու մարզում։ Աջակցման կենտրոնները բավական դժվարությամբ են համալրվում համապատասխան մասնագետներով՝ սոցաշխատող, իրավաբան, ովքեր մասնագիտացած են և ունեն ընտանեկան բռնության ենթարկված կանանց հետ աշխատելու հմտություններ։

«Մարզերում ծառայություններն այնքան էլ որակյալ չեն, քանի որ չկան համապատասխան մասնագետներ: Պետք էր օրենքի ընդունումից առաջ իրազեկվածության մակարդակ բարձրացվեր և բոլորի համար մատուցվող ծառայությունները լինեին նույն մակարդակի վրա: Մարզերում գործող աջակցման կենտրոնները ներառական չեն և հասանելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց»: **Փորձագետ**

Ընտանեկան բռնության ենթարկված կանանց՝ դատարան դիմելու հիմնական դժվարություններն ու խոչընդոտները

Ընդհանուր առմամբ ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են մի շարք խոչընդոտներ և դժվարություններ, որոնց ընտանեկան բռնության ենթարկված կանայք հանդիպում են՝ դատարաններ դիմելիս: Դրանք պայմանավորված են ոչ միայն ֆինանսական դժվարություններով՝ որպես պետական տուրք նախկինի փոխարեն 5 անգամ ավել գումար վճարելու պատճառով, այլև սոցիալ-հոգեբանական խնդիրներով, որոնք զուգորդվում կամ երբեմն էլ պատճառ հանդիսանում, որ կանայք առհասարակ չդիմեն դատարան՝ իրենց խախտված իրավունքները պաշտպանելու:

Այդուհանդերձ, քանի որ այս ուսումնասիրությունը վերաբերում է դատարանների հասանելիությանը, հարկ է նշել, որ ուսումնասիրության արդյունքներով **առկա պետական տուրքի պայմաններում կանանց մեծամասնությունն այդ գումարը վճարելու դժվարություններ ունի՝ հիմք ընդունելով նաև հարցվածների այն պնդումները, որ ընտանեկան բռնության ենթարկված կանայք հիմնականում ճնշված են և ֆինանսական կախվածության մեջ՝ ամուսնուց կամ վերջինիս ընտանիքից, որի պատճառով պետական տուրքը վճարելու համար դիմում են այլոց օգնությանը /ծնողներին, ընկերներին, բարեկամներին և այլն/**:

Հասարակական ընկալումներ և ճնշումներ

Ընտանեկան բռնության ենթարկված կանանց նկատմամբ հասարակական ընկալումներն ու ճնշումներն ամենաառանցքային խոչընդոտներից են դատարանի միջոցով կանանց ոտնահարված իրավունքների վերականգման և պաշտպանության համար:

Հարցման ընթացքում առանցքային տեղեկատուների, փորձագետների, դատարանի ներկայացուցիչների և հենց իրենց՝ կանանց կողմից բազմիցս նշվել է այն հանգամանքը, որ դատարան դիմում են ծայրահեղ դեպքերում՝ բռնության մասին ահազանգելու և ամուսնու հանցավոր վարքը կանխելու նպատակով, իսկ ամուսնալուծության համար հաճախ դիմում են **նպաստ համակարգում ընդգրկվելու համար**:

«Հիմնականում եղել են ամուսնալուծության հիմքով ենք դիմել, հետո ասել են, որ բռնություն է եղել, բայց արդեն չեն ուզել բարձրաձայնել դրա մասին: Ասել են՝ էնքան որ ամուսնալուծվենք, պրծնենք: Բռնության դեպքերում մտածում են, որքան հնարավոր է շուտ ամուսնալուծվեն ու ցիվիլ ձևով պրծնեն ամեն ինչից»: **Փաստաբան**

Համայնքներում ընտանեկան բռնության դեպքերի մասին շատերը լռում կամ խուսափում են նման ընտանիքներից՝ նախընտրելով մնալ դիտորդի դերում: Բացի այդ նույնիսկ այն դեպքերում, երբ կանայք պարբերաբար բռնության են ենթարկվում ամուսնու կամ ամուսնու ընտանիքի կողմից, իրենք ձգտում են խնդիրները լուծել առաջին հերթին ոչ իրավապահ մարմիններին դիմելու կամ ոչ ֆորմալ ինստիտուտներն ու կապերը օգտագործելու միջոցով: Մեծամասնությունն առաջին հերթին դիմում են իրենց ազգականներին, ծնողներին, մտերիմներին՝ նրանց ծանոթացնելով առկա խնդիրներին և ապա որոշում ընդունում՝ ամուսնալուծվել:

«Ինձ իմ երեխաներն էին պաշտպանում: Բացի այդ, իմ հարազատները, հորանցս ընտանիքը նույն փողոցում էին ապրում: Մենք դե դոմիկում էինք ամուսնուս հետ ապրում: Հենց մի փոքր ձայն էին լսում, վեճ, խոսակցություն էր լինում, մեկ էլ տեսնում էի, որ հարևանները իմաց են տվել տնեցիքիս, որ գան: Եղբայրս ու մայրս մեկ էլ տեսնում էի՝ կողքս են»: **Ընտանեկան բռնության ենթարկված կին**

Սովորաբար, բռնության մասին նույնիսկ իրենց մտերիմ շրջանակին տեղեկացնելու պարագայում, դրա վերաբերյալ տեղեկությունը թե՛ կանայք, թե՛ իրենց մտերիմները նախընտրում են չբարձրաձայնել և չքննարկել՝ խուսափելով համայնքում բամբասանքների տարածումից և քննարկման առարկա դառնալուց: Այդ է պատճառը, որ կանայք իրավիճակից դուրս գալու միակ ելքը տեսնում են ամուսնալուծության մեջ, որը, ինչպես կարելի է համոզվել տարբեր արձանագրված դեպքերից, ոչ միշտ է կանգնեցնում բռնարար ամուսնուն՝ կնոջից հաշվեհարդար տեսնելու համար: Ամուսնալուծության պատճառն էլ, ըստ հարցված փաստաբանների, նշվում է ոչ թե այն փաստը, որ ամուսինը կամ նրա ընտանիքը պարբերաբար բռնության է ենթարկել, այլ այն, որ զույգերը միմյանց չեն հասկացել կամ հարաբերությունները վատացել են երեխաների ծնվելուց հետո: Սա դատավորների ու փաստաբանների համոզմամբ՝ ընդունված ձևաչափ է ամուսնալուծության հայցերով դատարան դիմելիս:

> *«Բռնության ենթարկված կանայք ծայրահեղ դեպքերում են բարձրաձայնում բռնության մասին: Իրենք շատ զուսպ են ու դժվարությամբ են բացվում դատարանի կամ կողմնակի անձանց մոտ: Գործի բերումով, եթե անհրաժեշտ է լինում խոսել դրա մասին, նոր միայն ստիպված պատմում են, որ զուգընկերոջ կողմից բռնության են ենթարկվել»:* **Դատավոր**

Ինչպես նշվեց, հասարակական ընկալումները մեծապես ազդում են ընտանիքում բռնության մշակույթի վերացման և կնոջ խախտված իրավունքներն իրավական դաշտում լուծելու և պաշտպանելու ճանապարհին: Այդ ընկալումներն ու պատկերացումները ևս մի շարք ձևերով են դրսևորվում:

Առաջինը՝ հայկական ավանդական **ընտանիքի ամրության,** սրբության և ի վերուստ տրված լինելու մասին **միֆերն ու պատկերացումներն** են, որոնք շատ դեպքերում հանգեցնում են ընտանիքը փրկելու նպատակով կնոջ նկատմամբ բռնություններն արդարացնելու, դրանց վրա աչք փակելուն և բռնարարին չպատժելու պրակտիկաներին: Ընդ որում, ինչպես նշում են ուսումնասիրության մասնակիցները, հենց իրենք՝ կանայք, հազվադեպ են գիտակցում, որ բռնության զոհ են դարձել՝ արդարացնելով տղամարդու կոպիտ վարքն ու բռնությունը՝ որպես ինքին հասկանալի և ընդունելի երևույթ: Բացի այդ, դրսևորված բռնության պատճառները թե՛ հասարակության, թե՛ կնոջ, թե՛ կնոջ ընտանիքի անդամների կողմից մշտապես որոնվում են կնոջ մեջ՝ նկատի ունենալով, որ կինն է իր վարքով հրահրել նման վերաբերմունք իր հանդեպ:

> *«Բռնության ենթարկված կանանց գործերը քննվում են քրեական վարույթում, դրանք քաղաքացիականով չեն լինում, բայց կարող է դատարանում բացահայտվի, որ կինը բռնության է ենթարկվել: Որպես կանոն՝ էստեղի կանայք շատ զուսպ են, իսկ օրինակ տղամարդիկ՝ բռի ու կոպիտ: Գյուղի տղամարդը համեմատած քաղաքի տղամարդկանց՝ ավելի շատ են հակված էդ բռնությանը: Օրինակ, եթե տղամարդը պարզում է, որ կինը մութն ընկած ժամանակ գնացել է խանութ, դա կարող է առիթ դառնալ տարբեր վեճերի կամ նույնիսկ ծեծի, որովհետև գյուղում մի խանութ կա, մութ է լինում գիշերները ու բոլորը բոլորին գիտեն ու բամբասում են»:* **Դատավոր**

Փոքր համայնքներում և քաղաքներում առավել զգայուն են այս խնդրին արձագանքում ընտանեկան բռնության ենթարկված կանանց անմիջական միջավայրի մարդիկ՝ ընտանիքի վերաբերյալ իրենց ունեցած բացարձակ պատկերացումների ու կարծրատիպերի պատճառով: Գաղտնիք չէ, որ հայկական ավանդական ընտանիքի վերաբերյալ ունեցած միֆերն ու պատկերացումներն առավել կարծրացած են հենց գյուղական համայնքներում, որտեղ էլ բռնության հանդիպելիս, կանայք ստիպված են լռել և հանդուրժել բռնարարին՝ չունենալով դրա մասին բարձրաձայնելու կամ պաշտպանվելու ոչ մի գործուն աջակցություն ոչ միայն համայնքից, այլև այլ ինստիտուտներից, որոնք կոչված են պաշտպանել մարդկանց խախտված իրավունքները: Կարևորագույն խնդիրներից մեկն էլ այն է, որ, ընտանիքը ընդունելով որպես բացարձակ արժեք, ստորադասվում են ոչ միայն կնոջ իրավունքները, այլև երեխաների՝ արժանապատիվ ու խաղաղ միջավայրում ապրելու իրավունքը: Երեխաներն, ըստ հարցվածների, նման ընտանիքներում մեծանալով՝ ձեռք են բերում վնասված հոգեբանություն և բազմաթիվ բարդույթներ, որոնք ուղեկցում են նրանց ողջ կյանքում:

Երկրորդ տարածված կարծրատիպերի խումբը վերաբերում է **հայ կնոջ կերպարին**, ում վերագրվում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ հեզությունը, համեստությունը, մեղմությունը, համբերատարությունն ու դրանից բխող այլ կրավորական դերեր, որոնք անհրաժեշտության դեպքում շահարկվում են ոչ այնքան դրական, որքան բացասական կերպով՝ ի վնաս կանանց իրավունքների, ում նկատմամբ դրսևորվել է բռնությունը: Այսպես, տղամարդը նույնիսկ, եթե ապտակում է կնոջը, կինը պարտավոր է ներել նրան և համբերել, քանի որ ամուսնուն հակադարձելը կամ պաշտպանվելը դիտվում է որպես ըմբոստություն, որի համար էլ արդարացվում է պատիժը որպես այդպիսին:

> *«Ընտանեկան բռնության ենթարկված կանանց հետ պետք է ավելի զգայուն լինել: Պետք է իմանալ՝ ինչպես հարցեր տալ, որ կինը մեղքի զգացում չունենա և չկրկնազոհացվի: Նա չպետք է մտածի, որ բռնությունը իր պատճառով էր, որ ինչ որ մեկի դիմելիս չխտրականացվի, իր մոտ կասկած չառաջանա, որ իր մեղքով է բռնության ենթարկվում: Պետք է չափազանցված հույս չտալ և չհուսահատեցնել: Խորհրդատվությունը պետք է իրատեսական լինի»:* **Փորձագետ**

Այս առումով, ինչպես նշում էին հարցված կանայք, իրենց ամուսինների կիրառած բռնությունը մեծամասամբ արդարացվել է ընտանիքի ներսում՝ ամուսնու ծնողների կողմից, հաճախ էլ այդ բռնությունը հրահրվել հենց ամուսնու ծնողների կողմից, երբ առօրյա թեմաներում կինը, իբրև թե, հակաճառել կամ չի հնազանդվել նրանց կամքին՝ արտահայտելով սեփական կարծիքը, դիրքորոշումը կամ ազատությունը: Նույն կարծիքն են հայտնել նաև դատարանի ներկայացուցիչները:

> *«Իրենց խնդիրները հիմնականում դատարանի հետ ուղղակի առնչություն չեն ունենում, քանի որ դրանք օրինակ ծագած են լինում ամուսնու ծնողների հետ հարաբերություններում կամ այլ պատճառներով, որը դատարանը չի կարող լուծել: Բայց ես, եթե նկատում եմ, որ խնդիրը ծնողների մեջ է, աշխատում եմ առանձնացնել զույգերին, որ իրենք միայնակ կայացնեն որոշումները»:* **Դատավոր**

Ըստ ուսումնասիրության մասնակիցների՝ հասարակական ընկալումների հաջորդ խումբը, որն անմիջականորեն ազդում է բռնության հանդիպելիս իրավապահ մարմիններին դիմելու՝ կանանց որոշման վրա, քրեական մշակույթից մնացած, այսպես կոչված, **«ծախողի» պիտակավորումից** խուսափելու ձգտումն է: Գյուղական համայնքներում սա առավել տարածված երևույթ է, քան քաղաքում, որտեղ կանայք առավել իրավագիտակից են: Միաժամանակ, շատերի համոզմամբ, երիտասարդությունը, շփվելով և ինքնակրթվելով տարբեր միջավայրերում, ավելի իրազեկ է իր իրավունքներին և դրանք պաշտպանելու հնարավորություններին, քան ավելի ավագ սերնդի կանայք՝ համաձայն ՔՀԿ ներկայացուցիչների ֆոկուս խմբային քննարկման արդյունքների:

> *«Հասարակությունը բավական խտրական է վերաբերվում ընտանեկան բռնության ենթարկված անձանց, քանի որ առաջինը ընտանիքն է, հետո՝ անձը: Ընտանիքի հարցերն ավելի կարևոր են, կինը պիտի զիջի և դա ընկալում է, ինչի պատճառով տուժում են և չեն բարձրաձայնում խնդիրները, չեն դիմում իրավապահ համակարգին, քանի որ մտածում են ոստիկանություն դիմելով իրենց կընկալեն որպես իրենց ամուսնուն «հանձնող»: Ընտանիքում են պահում ամեն ինչ և դրանից տուժում է կինը. նա պետք է լռի և համբերի: Ոստիկանությանը դիմելու դեպքում էլ, գալիս են խրատում են, որ ընտանիքը չքայքայվի, և կանայք ավելի են ընկճվում դրանից: Ինչի՞ դիմեն, եթե չեն աջակցելու, պաշտպանելու»:* **Փորձագետ**

Եթե վերադառնանք հասարակության կողմից «ծախող»-ի պիտակավորումից խուսափելու՝ կանանց ձգտմանը, հարկ է նշել, որ հենց ոստիկանությունն է երբեմն ստացած դիմումներին աշխատում ընթացք չտալ՝ պայմանավորվածություն ձեռք բերելով կողմերի հետ, որպեսզի բռնության մասին ահազանգը չեղարկվի:

Մեկ այլ կարծրատիպային պատկերացումների խումբ, որը ճնշող ազդեցություն է ունենում կանանց վրա՝ **բաժանված կնոջ կերպարն** ու բացասական ընկալումներն են հասարակության մեջ: Կանայք հիմնականում խուսափում եմ բաժանվել իրենց բռնարար զուգընկերոջից՝ գիտակցելով, որ

հասարակության մեջ միայնակ կինը, ով բաժանվել է և երեխա ունի, մի կողմից ինքն է դառնում տարատեսակ քննադատությունների թիրախ, մյուս կողմից՝ երեխան՝ պիտակավորվելով որպես բաժանված կնոջ զավակ։

> *«Հիմա կարողանում եմ իմ պատմության մասին առանց կաշկանդվելու խոսել, բայց այն ժամանակ շատ էի հուզվում, վախենում, թե ինչ կմտածեն մարդիկ։ Բացի այդ, չէի պատկերացնում, որ իմ ընտանիքում նման բան կարող է լինել ու չէի ուզում, որ մարդիկ իմանան այդ ամենը։ Ամուսնալուծվելուց հետո էլ դատարան դիմեցի, ոչ թե որ դատարանով բաժանված լինեմ և այլն, այլ որ կարողանամ դրա միջոցով նպաստ ստանամ։*
> *Այն ժամանակ ես բաժանված կին լինելուց սարսափում էի, մտածում էի, ըհը, բոլորը կսկսեն խոսել իմ մասին, կբամբասեն, քանի որ համայնքը շատ փոքր է ու բոլորը բոլորին ճանաչում են։ Փողոցով, որ քայլում էի, նայում էի մարդկանց, կարծում էի, թե սաղ իմ մասին են խոսում։ Հիմա, այսքան տարիներ անց, էլ չեմ մտածում, թե ուրիշներն ինչ կմտածեն կամ կխոսեն»։* **ԸԲ ենթարկված կին**

Այսպիսով, հասարակական շատ ընկալումներ և կարծրատիպային պատկերացումներ կնոջը որևէ հնարավորություն չեն տալիս բռնության ենթարկվելիս պաշտպանել սեփական իրավունքները ոչ միայն իրավական դաշտում, այլև քաղաքակիրթ երկխոսության և սեփական արժանապատվությունը պաշտպանելու այլ եղանակներով՝ ընտանիքի ամրության և սրբության մասին տարածված կեղծ պատկերացումների, հայ կնոջ կերպարի կարծրացման և «ծախողի» կամ մատնիչի բացասական պիտակավորման և տարածված այլ կարծրատիպերի պատճառով։ Այդուհանդերձ, ըստ ուսումնասիրության մասնակիցների, բռնության մշակույթը ընտանիքներում գնալով նվազում է՝ շնորհիվ ակտիվ և բարձր ինքնահարգանք ունեցող կանանց։

> *«Իմ կարծիքով նվազում են, քանի որ կանայք սկսել են իրենք իրենց սիրել ու պաշտպանել, բայց որոշ ժամանակ առաջ, որ հիշում եմ, թեկուզ իմ ծնողներին, մեր առաջվա ընտանիքները համայնքում ապրող, ամեն քայլափոխի կանայք բռնության էին ենթարկվում իրենց ամուսինների կողմից»։* **ԸԲ ենթարկված կին**

Ֆինանսական դժվարություններ

Ֆինանսական դժվարությունները ևս էականորեն ազդում են կանանց՝ դատարան դիմելու որոշման վրա։ Ընդ որում, դատական ծախսերի մեջ ամենամեծ մասնաբաժին են կազմում փաստաբանի ծառայությունների դիմաց վճարները, այնուհետև պետական տուրքն ու ճանապարհածախսը։ Ֆինանսական առումով ընտանեկան բռնության ենթարկված կանայք, գտնվելով կախվածության մեջ իրենց ամուսիններից կամ ծնողներից, դժվարությամբ են կարողանում գումար հայթայթել, որպեսզի դատարանի միջոցով կարողանան լուծել ընտանեկան վեճերն ու վերականգնեն իրենց խախտված իրավունքները։ Ուսումնասիրության մասնակիցների գերակշիռ մեծամասնության կարծիքով՝ ընտանեկան բռնությունը դրսևորվում է ավելի հաճախ ֆինանսապես անապահով ընտանիքներում, քանի որ տարաձայնություններն ավելի շատ սոցիալական խնդիրների շուրջ են առաջանում, որոնք վերաճում են բռնության։ Այդուհանդերձ, ըստ փորձագետների, չպետք է միանշանակ պնդել, որ բռնությունը միայն սոցիալ-տնտեսական հիմքով է դրսևորվում, քանի որ դրա առաջացման բազմաթիվ այլ պատճառներ կան։ Ըստ հարցվածների՝ քիչ թե շատ ապահովված կանայք, ովքեր ֆինանսապես անկախ են իրենց զուգընկերոջից, ավելի հեշտությամբ եմ հաղթահարում բռնության հետևանքները։

> *«Ֆինանսական խնդիրները շատ են. դատարանում նիստերից առաջ դատավորը փորձում է իրազեկել, որ իրենք իրավունք ունեն պետական տուրքից ազատվելու, եթե նպաստառու են կամ կարող են հանրային պաշտպանի ծառայություններից օգտվեն։ Կան նաև հաշտարարներ, բայց իրենց ծառայություններից օգտվելը որոշակի ժամանակից հետո վճարովի է»։* **Փաստաբան**

Սրան զուգահեռ՝ ֆինանսական դժվարություններով պայմանավորված՝ կանայք ստիպված են լինում համակերպվել բռնության հետ, քանի որ ինքնուրույն չեն կարող ապահովել իրենց ու երեխաների կեցությունն ու գոյությունը՝ առանց ամուսնու աջակցության:

Ընդհանուր առմամբ, փորձագետների համոզմամբ, հիմնականում բռնարար դառնում է գումար վաստակողը՝ անկախ սեռից: Նույն կերպ դատարաններում երեխաների բնակության վայրը որոշելիս նախապատվություն է տրվում այն ծնողին, ով նյութապես ավելի ապահովված է: Այսինքն՝ հաճախ երեխաները հայտնվում են հենց բռնարար ամուսնու հոգածության ներքո:

Դատարանների մատչելիությունն ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար

Ընդհանուր առմամբ Լոռու մարզի դատավորների, դատավորների օգնականների և փաստաբանների շրջանում անցկացված հարցազրույցներից պարզ է դառնում, որ ընտանեկան բռնության դեպքերը դատարաններում հազվադեպ են հանդիպում: Պատճառը, սակայն, այն չէ, որ դրանք չկան, այլ այն, որ, ինչպես նշվեց զեկույցի նախորդ բաժնում, ընտանեկան բռնության մասին, սովորաբար, աշխատում են լռել և չբարձրաձայնել ոչ միայն հանրության շրջանում, այլև անգամ մտերիմների մոտ և դատարաններում: Բռնության մասին բացահայտումը հնարավոր է լինում գործի քննության այս կամ այն փուլում, օրինակ՝ երեխայի բնակության վայրի որոշման կամ ծնողական իրավունքներից զրկելու հայցեր ներկայացնելիս:

Այս ուսումնասիրության ընթացքում «Սպիտակի Հելսինկյան Խումբ» իրավապաշտպան ՀԿ-ի շահառու բռնության ենթարկված կանանց շրջանում իրականացվել են առցանց անանուն հարցումներ՝ նախապես ուղարկելով հարցման հղումը: Այս հարցման տվյալները մեզ հնարավորություն են տալիս ստանալու քանակական տվյալներ, որոնք թեև ներկայացուցչական չեն ողջ մարզի համար, այդուհանդերձ, հուսալի են՝ հաշվի առնելով շահառուների վստահությունը կազմակերպության գործունեության հանդեպ:

Ինչպես երևում է Գծապատկեր 4-ից, հարցման մասնակիցների (թվով՝ 24) 42%-ը դիմել և առնչվել է Լոռու մարզի դատարանների հետ:

Գծապատկեր 4. Ընտանեկան բռնության ենթարկված կանանց առնչությունը դատարանների հետ



Ընդ որում՝ հարկ է նշել, որ դատարանի հետ առնչություն չունեցած հարցվողների մեջ կան կանայք, ովքեր նախկինում փորձել կամ այժմ պատրաստվում են դիմել դատարան՝ տարբեր հայցերով (հիմնականում ամուսնալուծության կամ ալիմենտի պահանջի):

Գծապատկեր 5. Դատարան դիմելու հիմնական պատճառները



Ինչպես երևում է Գծապատկեր 5-ից, հարցվածների շրջանում գերակշռում են նրանք, ովքեր պատրաստվում են դիմել դատարան, կամ դիմել են դատարան՝ ալիմենտի գանձման և ամուսնալուծության հայցերով: Միաժամանակ դատարան հայց ներկայացրած կանանց ճնշող մեծամասնությունը հնարավորություն չի ունեցել օգտվելու իրավաբանական խորհրդատվության կամ փաստաբանի վճարովի ծառայություններից: Նույնիսկ նրանք, ովքեր սոցիալական անապահովության վերաբերյալ ներկայացրել են համապատասխան փաստաթղթեր և ունեցել հանրային պաշտպանի ծառայություններից օգտվելու հնարավորություն՝ հաճախ հրաժարվել են դրանցից և դիմել այլ փաստաբանների՝ վճարելով վերջիններիս:

Գծապատկեր 6. Փաստաբանի առկայությունը դատարան դիմելիս



Գծապատկեր 6-ից երևում է, որ հարցվածների գերակշիռ մասը չի ունեցել փաստաբան: Սակայն, դատարանների ներակայացուցիչների կարծիքով առանց փաստաբանների ներկայացված հայցերը պատշաճ կազմված չեն լինում և, որպես կանոն, մերժվում են, որից հետո կանայք դիմում են փաստաբանների օգնությանը: Գրագետ հայցեր ներկայացնելու պակասն, ըստ դատավորների, պայմանավորված է կանանց ընդհանուր զարգացվածության մակարդակով:

> *«Եթե իրենք կարողանան հավաստող փաստաթղթեր գտնեն, որ սոցիալապես անապահով են, պետությունը նրանց կտրամադրի հանրային պաշտպան: Երբեմն այդ փաստաթղթերը ներկայացնելու պրոցեսը կարող է բարդ լինել իրենց համար, իսկ առանց փաստաբանի ու հանրային պաշտպանի իրենք հնարավոր է մի քանի անգամ սխալ հայցադիմում ներկայացնեն,*

որը դատարանը հետ կուղարկի կամ չընդունի, դրա համար էլ իրենք փաստաբանի միջոցով են դա լրացնում, չունեն այդ գրագիտությունը, որ ինքնուրույն անեն»: **Դատավոր**

Գծապատկեր 7. Փաստաբանի ծառայությունների դիմաց վճարի առկայությունը



Գծապատկեր 7-ից երևում է, որ **հարցվածների կեսից փոքր ինչ ավելին փաստաբանական ծառայությունների դիմաց չի վճարել, ընդ որում ոչ այն պատճառով, որ բոլորն ունեցել են հանրային պաշտպաններ, այլ որովհետև օգտվել են ՀԿ-ների անվճար իրավաբանական աջակցության հնարավորություններից:**

Գծապատկեր 8. Անվճար իրավաբանական օգնության՝ հանրային պաշտպանի, առկայությունը



Գծապատկեր 8-ից երևու է, որ հարցվողների 54%-ն է միայն օգտվել հանրային պաշտպանի ծառայություններից:

Գծապատկեր 9. Աջակցող որևէ կազմակերպությունից օգնություն ստանալու նպատակով դիմելու դեպքերը



Ընդհանուր առմամբ, հարցվածների 63 %-ն է ներգրավվել ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար տրամադրվող աջակցության ծրագրերում, այդ թվում «Սպիտակի Հելսինկյան Խումբ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից մատուցվող:

Գծապատկեր 10. Ստացած աջակցության բնույթը



Գծապատկեր 10-ից երևում է, որ աջակցության ծրագրերի առումով հարցված կանայք ավելի շատ օգտվել են հոգեբանի կամ այլ մասնագիտական որակավորում ունեցող անձանց, ապա իրավաբանական խորհրդատվությունից և քիչ թվով դեպքերում՝ ստացել նյութական, դրամական աջակցություն՝ պետական տուրքը վճարելու համար:

Գծապատկեր 11. Ստացած աջակցության ազդեցությունը խնդրի լուծման վրա



Ինչպես երևում է Գծապատկեր 11-ից աջակցության ծրագրերը, մատուցված ՔՀԿ կամ այլ կազմակերպությունների կողմից, բարձր արդյունավետություն են ունեցել կանանց համար: Այսպես, հարցվածների 69%-ը նշել է, որ լիովին կարողացել են լուծում գտնել իրենց խնդիրների համար: Հարցվածների միայն 6%-ն է նշել, որ դրանք ընդհանրապես չեն ազդել իրենց խնդրի լուծման վրա:

Գծապատկեր 12. Դատարանի գործունեությունից հարցվածների բավարարվածության աստիճանը



Գծապատկեր 12-ից երևում է, որ **ամենաբարձր գնահատականն ստացվել է դատարանների ընդհանուր գործունեության (38%), ամենացածրը (67%)՝ գործով նշանակված նիստերը ժամանակին սկսելու և գործերի քննության տևողության չափանիշներից ելնելով:** Նիստերը հետաձգելուց, գործերի քննության տևողության և ժամանակին չսկսելու խնդրից կանայք դժգոհել են նաև անհատական հարցազրույցների ժամանակ:

> *«Դատարանն ընդհանրապես լավ է աշխատում, բոլորը բարեհամբույր էին, որևէ անախորժություն չեմ ունեցել այնտեղ: Իրենք կարողանում էին այնպես ինձ հետ շփվել, որ այդ վիրավորանքը չզգամ, ավելին՝ իրենք կանխում էին ամուսնուս կամ իր բարեկամների կողմից ավելորդ խոսակցություններն ու արտահայտությունները:*
> *Առաջին դատի ժամանակ, որ գնացի ամուսնալուծվելու, ես իրենց խնդրեցի, որ ժամանակ չտան ինձ մտածելու համար, քանի որ վստահ էի ու նախկինում երկար մտածել էի ամուսնալուծվելու մասին ու իմ որոշումը գիտակցված էր:*
> *Դատարանից ընդհանուր առմամբ գոհ եմ, բայց էդ ամբողջ պրոցեսից եմ շատ դժգոհ, քանի որ դատական նիստերը շատ երկար էին տևում ու հաճախակի էին հետաձգվում մի քանի ամսով: Իմ դատավորներից էլ եմ գոհ»:* **Ընտանեկան բռնության ենթարկված կին**

Այժմ առանձին-առանձին քննարկենք չափանիշներից յուրաքանչյուրը, որոնք գնահատել են կանայք՝ ըստ հերթականության:

Այսպես, **հաշմանդամություն և հատկապես տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար դատարանի մատչելիությունից հարցվածների կեսն ավելի շուտ բավարարված չէ:** Նույն կարծիքին են նաև փորձագետներն ու առանցքային տեղեկատուները:

> *«Միշտ ասում ենք, որ դատական համակարգը հասանելի չէ , ներառական չէ: Եթե քաղաքացին գնում է, չեն կարողանում շփվել, չունեն օրինակ ժեստերի լեզվին տիրապետող մասնագետ կամ այլ համապատասխան մասնագետ , այդ դեպքում ինչպես կարող են աջակցել: Պետությունը պետք է բոլորի մասին հոգ տանի և խտրականություն չդնի: Անձը բացարձակ չի զգում իրեն պաշտպանված, դրա համար էլ չի դիմում դատարան: Առաջին հերթին օրենսդրությունը պետք է փոխվի: Օրինակ՝ պետտուրքի հետ կապված վճարը համարժեք է թոշակառուի մեկ ամսվա թոշակին, ինչպես կարող է նա դիմի դատարան»:* **Փորձագետ**

ՀՀ Արդարադատության հանդեպ ունեցած վստահությունն ավելի շուտ գոհացնող չէ 24 հարցվողներից 15-ի համար (63%):

Հարցվածներից 13-ը կամ 54%-ը դժգոհ են դատավորի և դատարանի գրասենյակի անձնակազմի վերաբերմունքից:

Դատարանի շենք հասնելուց՝ ճանապարհածախսից, դժգոհ են հարցվածների 42%-ը:

Արդարադատության իրականացմանն առնչվող ծախսերը կամ պետական տուրքի չափը չի գոհացրել հարցվածների 54%-ին կամ կեսից ավելիին:

Գծապատկեր 13. Դատարանների հետ կապի հաստատման միջոցները



Գծապատկեր 13-ից երևում է, որ ***հարցին՝ ինչպես են կապ հաստատում դատարանի հետ, հարցվածները հավասարապես նշել են, որ կամ անձամբ են այցելում կամ հեռախոսով զանգահարում դատարան: Քիչ դեպքերում՝ էլեկտրոնային փոստի միջոցով են տեղեկություն ստանում կամ ծանուցվում:***

Գծապատկեր 14. Դատարանի սահմանած պետական տուրքերի ու վճարների մատչելիությունը



Գծապատկեր 14-ից երևում է, որ ***հարցվածների մեջ մեծաթիվ են նրանք, ովքեր առհասարակ տեղյակ չեն դատարանի սահմանած պետական տուրքերից և վճարներից (42%), 42%-ն էլ, ովքեր իրազեկված են, նշել են, որ ընդհանրապես չեն կարող վճարել և պարտք/վարկ են վերցնելու՝ այն վճարելու համար: Ավելի փոքր թվով կանայք (12%) նշել են, որ կարող են վճարել պետական տուրքը խնայողությունների շնորհիվ, մի քանիսն էլ (4%) նշել է, որ պետական տուրքի միայն մի մասն է կարող վճարել, մյուս մասը խնդրելու է ընկերներից ու բարեկամներից:***

Գծապատկեր 15. Գումարի չափը, որը պատրաստ են վճարել հարցվողները՝ որպես պետական տուրք



Հարցին՝ որքան գումար են պատրաստ վճարել հարցվողները՝ որպես պետական տուրք, 24-ից 9-ը կամ 38%-ը նշել են մինչև 5.000 դրամ, 5-ը դժվարացել է պատասխանել, իսկ 6-ը՝ նշել են, որ կարող են վճարել 5.000 – 15.000 դրամ: Կան նաև առանձին հարցվողներ, ովքեր պատրաստ են վճարել ավելի բարձր գումար, սակայն նրանք փոքր թիվ են կազմում:

Գծապատկեր 16. Դատարանների մատչելիությունն առկա դատական ծախսերի պայմաններում



Ընդհանրացնելով իրենց տպավորությունները դատարան դիմելու ծախսերի վերաբերյալ, հարցվածների գերակշիռ մեծամասնությունը նշել են, որ դատարանից օգտվելն ընդհանրապես (17%) կամ այդքան էլ մատչելի չէ իրենց (62%), ինչը ևս մեկ անգամ ապացուցում է այն վարկածը, որ պետական տուրքի վճարը 4.000 դրամից 20.000 դրամ դարձնելու որոշումն անհիմն ու արդարացված չէ կամ առնվազն պետք է վերանայվի և գործուն մեխանիզմներով չեղարկվի ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար:

ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ









Աղյուսակ 1. Հարցվողների Սոցիալ-ժողովրդագրական տվյալները

Հիմնական եզրակացություններ և առաջարկներ

Եզրակացություններ

- Լոռու մարզի առաջին ատյանի դատարաններում ընտանեկան բռնության դեպքերով հայցադիմումներ խիստ հազվադեպ են հանդիպում՝ տարին մեկ կամ երկու գործ, երբեմն էլ առհասարակ նման դեպքեր տարվա կտրվածքով չեն լինում: Այսպես, Լոռու մարզի տարբեր քաղաքներում ձնակույտի մեթոդով հարցված 10 փաստաբաններից միայն 3-ն ունեին նման փորձառություն, այն էլ մեկ կամ երկու անգամ՝ իրենց ողջ մասնագիտական գործունեության ընթացքում:
- Դատարաններում ընտանեկան բռնության դեպքերի քննության սակավությունը պայմանավորված է գործերի քննության երկարատև ընթացքով և դատարանների կողմից վճիռների կայացման անարդյունավետությամբ:
- 2017 թվականից ի վեր ընտանեկան իրավահարաբերություններին առնչվող գործերն ունեն աճի միտում: 2021թ.-ին՝ 2020թ.-ի հետ համեմատ, նկատվել է չնչին նվազում, որը, սակայն, չի փոխում ընդհանուր դինամիկան:
- Լոռու մարզի առաջին ատյանի դատարաններում քաղաքացիական գործերով ընտանեկան իրավահարաբերություններին առնչվող ամենահաճախ հանդիպող դեպքերը համապատասխանաբար ամուսնալուծության, ալիմենտի պահանջի, երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու, երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ գործեր են, ամենահազվադեպը՝ ծնողական իրավունքների վերականգնման, ամուսնական պայմանագրի փոփոխման կամ լուծման, երեխայի որդեգրումը վերացնելու և երեխայի որդեգրման վերաբերյալ գործերն են:
- Լոռու մարզում վերջին տարիներին նվազման միտում ունեն ալիմենտի պահանջի, երեխայի բնակության վայրը որոշելու և երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու վերաբերյալ գործերը:
- ՀՀ ողջ տարածքում ամուսնալուծության, ալիմենտի պահանջի, ալիմենտի չափը փոփոխելու և ամուսինների ընդհանուր գույքը բաժանելու վերաբերյալ գործերը նվազել են 2021թ.-ին:
- Մարզերում ընտանեկան բռնության ենթարկված կանայք նույնիսկ չեն գիտակցում, որ իրենք բռնության զոհ են և պետք է պաշտպանեն իրենց խախտված իրավունքները:
- Ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանությունը, որը հաճախ պահանջում է հրատապ միջոցառումների ձեռնարկում, չի իրականացվում՝ պետական ընթացակարգերի դանդաղ ու ոչ արդյունավետ լինելու պատճառով:
- Լոռու մարզում ուսումնասիրության մասնակիցների ճնշող մեծամասնությունն այն համոզմանն է, որ փաստաբանների ծառայություններն ընտանեկան բռնության ենթարկված կանանց դեռևս անհասանելի են:
- Տարբեր փաստաբանների և փորձագետների պնդմամբ՝ հանրային պաշտպանի գրասենյակն արդյունավետ և սրտացավ չի գործում, քանի որ ընտանեկան բռնության ենթարկված կանայք, օգտվելով նրանց անվճար ծառայություններից, հաճախ դժգոհ են մնում և ստիպված լինում գումար հայթայթել ու այլ փաստաբան գտնել:
- Հարցված կանայք ու փարձագետները նշել են, որ, ընդհանուր առմամբ, դատարանի աշխատանքն իրենց գոհացնում է, սակայն պետական տուրքի վճարը և դատական այլ ծախսեր իրենց ստիպում են դատարան դիմել ծայրահեղ դեպքերում, երբ արդեն չկան այլ ուղիներ՝ բռնարար ամուսնու գործողությունները կանխելու և պաշտպանվելու:
- Ոստիկանությունն ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանության հարցում արդյունավետ չի գործում:

- Այսպիսով, ուսումնասիրության մասնակիցների մեծ մասն այն կարծիքին է, որ չնայած ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանության համար կան տարբեր մեխանիզմներ, բայց և այնպես մարզերում դրանք արդյունավետ չեն գործում:
- Առկա պետական տուրքի պայմաններում կանանց մեծ մասն այդ գումարը վճարելու դժվարություններ ունի՝ հիմք ընդունելով նաև հարցվածների այն պնդումները, որ ընտանեկան բռնության ենթարկված կանայք հիմնականում ճնշված են և ֆինանսական կախվածության մեջ՝ իրենց ամուսնուց կամ վերջինիս ընտանիքից, ինչի պատճառով պետական տուրք վճարելու համար դիմում են այլոց օգնությանը (ծնողներին, ընկերներին, բարեկամներին և այլն):
- Ընտանեկան բռնության ենթարկված կանանց նկատմամբ հասարակական ընկալումներն ու ճնշումներն ամենաառանցքային խոչընդոտներից են՝ դատարանի միջոցով կանանց ոտնահարված իրավունքների վերականգման և պաշտպանության համար:
- Ըստ ուսումնասիրության մասնակիցների՝ բռնության հանդիպելիս իրավապահ մարմիններին չդիմելու՝ կանանց որոշումը մեծապես պայմանավորված է այսպես կոչված **«ծախողի» պիտակավորումից** խուսափելու ձգտմամբ:
- Հարցվածների կեսից փոքր ինչ ավելին փաստաբանական ծառայությունների դիմաց չի վճարել, ընդ որում ոչ այն պատճառով, որ բոլորն ունեցել են հանրային պաշտպաններ, այլ որովհետև օգտվել են ՀԿ-ների անվճար իրավաբանական աջակցության հնարավորություններից:
- Աջակցության ծրագրերը, մատուցված ՔՀԿ կամ այլ կազմակերպությունների կողմից, բարձր արդյունավետություն են ունեցել հարցված կանանց համար: Այսպես, հարցվածների 69%-ը նշել է, որ լիովին կարողացել են իրենց խնդիրներին լուծում գտնել: Հարցվածների միայն 6%-ն է նշել, որ դրանք ընդհանրապես չեն ազդել իրենց խնդրի լուծման վրա:
- Դատարանների գործունեությունը գնահատելիս՝ ամենաբարձր գնահատականն ստացվել է դատարանների ընդհանուր գործունեության (38%), ամենացածրը (67%)՝ գործով նշանակված նիստերը ժամանակին սկսելու և գործերի քննության տևողության չափանիշների մասով:
- Հարցված հաշմանդամություն և հատկապես՝ տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց կեսն ավելի շուտ բավարարված չէ դատարանի մատչելիությունից:
- ՀՀ Արդարադատության հանդեպ ունեցած վստահությունն ավելի շուտ գոհացնող չէ 24 հարցվողներից 15-ի համար (63%):
- Հարցվածներից 13-ը կամ 54%-ը դժգոհ են դատավորի և դատարանի գրանսենյակի անձնակազմի վերաբերմունքից:
- Դատարանի շենք հասնելուց՝ ճանապարհածախսից, դժգոհ են հարցվածների 42%-ը:
- Արդարադատության իրականացմանն առնչվող ծախսերը կամ պետական տուրքի չափը չի գոհացրել հարցվածների 54%-ին կամ հարցվողների կեսից մի փոքր ավելիին:
- Հարցին՝ ինչպես են կապ հաստատում դատարանի հետ, հարցվածները հավասարապես նշել են, որ կամ անձամբ են այցելում, կամ հեռախոսով զանգահարում դատարան: Քիչ դեպքերում էլ փոստի միջոցով են տեղեկություն ստանում կամ ծանուցվում:
- Հարցվածների մեջ մեծաթիվ են նրանք, ովքեր առհասարակ տեղյակ չեն դատարանի սահմանած պետական տուրքերից և վճարներից (42%), ևս 42%-ն էլ, թեև իրազեկված են, նշել են, որ ընդհանրապես չեն կարող վճարել և պարտք/վարկ են վերցնելու՝ այն վճարելու համար: Ավելի փոքր թվով կանայք (12%) նշել են, որ կարող են վճարել պետական տուրքը խնայողությունների շնորհիվ, մի քանիսն էլ (4%) նշել է, որ պետական տուրքի միայն մի մասն է կարող վճարել, իսկ մյուս մասը խնդրելու է ընկերներից ու բարեկամներից:
- Հարցին՝ որքան գումար են պատրաստ վճարել հարցվողները՝ որպես պետական տուրք, 24-ից 9-ը (38%) նշել են մինչև 5.000 դրամ, 5-ը դժվարացել է պատասխանել, 6-ը՝ նշել են, որ կարող են վճարել 5.000 – 15.000 դրամ: Կան նաև առանձին հարցվողներ, ովքեր պատրաստ են վճարել ավելի բարձր գումար, սակայն նրանք փոքր թիվ են կազմում:
- Ընդհանրացնելով իրենց տպավորությունները դատարան դիմելու ծախսերի վերաբերյալ՝ հարցվածների գերակշիռ մեծամասնությունը նշել են, որ դատարանից օգտվելն ընդհանրապես

(17%) կամ այդքան էլ մատչելի չէ իրենց(62%), ինչը ևս մեկ անգամ ապացուցում է վարկածը, որ պետական տուրքի վճարը 4.000 դրամից 20.000 դրամ դարձնելու որոշումն անհիմն ու արդարացված չէ կամ առնվազն պետք է վերանայվի և գործուն մեխանիզմներով չեղարկվի՝ ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար։

Առաջարկներ

- Դատարանները դարձնել մատչելի ընտանեկան բռնության ենթարկված կանանց՝ վերացնելով պետական տուրքի վճարը կամ էականորեն նվազեցնելով այն,
- Դատարաններում ընտանեկան բռնության դեպքերով հատուկ դատավորներ առանձնացնել և գործերի քննությունն իրականացնել ավելի արագ ու օպերատիվ,
- Պետության կողմից անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրել ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար կամ ունենալ Թեժ գծի հնարավորություն՝ նման դեպքերի համար,
- Բոլոր մարզերում ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար ստեղծել բավարար թվով ապաստարաններ,
- Իրականացնել իրազեկման աշխատանքներ հանրության շրջանում ընտանեկան բռնության դեպքերի բարձրաձայնման և կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ,
- Կոտրել կարծրատիպային պատկերացումներն ու հասարակական ընկալումներն ընտանիքում կանանց ավանդական դերերի վերաբերյալ,
- Մարզերում բնակվող կանանց մասնակցությամբ պարբերաբար իրականացնել դասընթացներ՝ կանանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ,
- Իրականացնել ծրագրեր բռնարար ամուսինների շրջանում և աշխատանքներ տանել նրանց կողմից բռնության դեպքերի նվազեցման ուղղությամբ,
- Դյուրացնել դատարան դիմելու ընթացակարգերն ու հայցադիմումների ձևերը՝ ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար,
- Բարձրացնել կանանց իրազեկությունը իքնապաշտպանության մեթոդների վերաբերյալ,
- Խնդիրները լուծել ընտանեկան թերապիայի միջոցով,
- Ավելացնել սոցիալական աշխատողների թիվը, ովքեր ունեն ընտանեկան բռնության ենթարկված կանանց հետ աշխատելու հմտություններ և փորձ,
- Հոգեբանական աջակցության ծրագրեր իրականացնել ընտանեկան բռնության ենթարկված կանանց ընտանիքներում,
- Ոստիկանությունում ունենալ հոգեբանի որակավորում ունեցող համապատասխան անձինք, ովքեր տիրապետում են ընտանեկան բռնության ենթարկված կանանց հետ աշխատելու սկզբունքներին,
- ՔՀԿ-ների ու ոստիկանության միջև ամրապնդել համագործակցությունը և կազմակերպել վերապատրաստման դասընթացներ ոստիկանների շրջանում։